

Պիսմարց առանձին հեռագրով շնորհակալ եղաւ կայսեր այս յայտարարութեան համար: Մարտ 25ին առտու այլեւայլ խորհրդարաններու 418 անդամ՝ Պիսմարքին անձամբ շնորհատրելու դէպ ի Փրիստրիխտուն ճամբայ ելան, որոնց հետեւեցաւ երկրորդ օրը կայսրն մանուկ թագաժառակին հետ:

Եւրոպական պետութեանց ուշադրութիւնն այժմ՝ Ռուսաց տէրութեան գտած մէկ յաջողութեան դարձած է: Ռուսիոյ ասիական ցամաքին արեւելեան կողմն ունեցած վերջին զինուորական կայանը՝ Վլատիկոսոքը նաւահանգիստը՝ մինչեւ ցայսօր ձմերուան ամիսներուն մէջ նաւերու անմատչելի էր, որով իր ռազմական յարմարութիւնը միշտ չափաւորուած կը մնար: Այս ձմերուան մէջ փորձի համար դրկուած նաւ մը ոչ միայն յաջողած է Վլատիկոսոք տարած զօրական ոյժերը ցամաք հանել, այլ եւ սառնահատի օգնութեամբ եզերքի երկայնութեամբ անցնիլ եւ ծանր թնդանօթիներ եւ ուրիշ ռազմատուօժ ցամաք փոխադրել: Այս պատճառաւ Վլատիկոսոքի զինուորական նշանակութիւնը կարեւորագոյն դիրք մը կը ստանայ, որ եւ անշուշտ Ռուսիայի, Անգղիոյ ու Ճաքոնի պետութեանց մէջ եղած ուժական համեմատութեան վրայ ստանց ազդեցութեան պիտի չմնայ:

Ռուսիոյ հանգուցեալ իկրս նախարարին տեղ այժմ՝ Վիեննայի դեսպանն իշխան Լոպանով արտաքին գործոց նախարարական պաշտօնը ստանձնեց:

Այլեւայլ օրավթերթերու տուած տեղեկութեանց համեմատ Լորտ Ռոգալէրի Անգղիոյ պաշտօնարանին նախարարապետը հրաժարելու է այս պաշտօնէն: Թէ՛ւ այս տեղեկութիւնները միշտ քացի է քաց տուտ կը հանուին, այսու ամենայնիւ նման լիթուցիկ լուրեր, ստէպ կը յաճախեն: Որչափ կ'երեւայ առանց հիման շին այս լուրերը: Լորտ Ռոգալէրի քնատութեամբ ու ջղագարութեամբ տառապող անձ մըն է, եւ նախարարապետութեան նման ծանր պաշտօնն իր հիւանդութեան նպաստաւոր չէ. քաց ասկէ կառավարչական ազատամիտ մեծամասնութեան յետախաղաց փիճակը (մանաւնդ վերջի ժամանակս, ուր Լոնտոնի

կոմսական խորհրդարանի նոր ընտրութեանց առթիւ կառավարութիւնը 23 ընտրող շրջանակ կըրսնցուց) անշուշտ նպաստաւոր հանգամանք մը չունի Լորտ Ռոգալէրիի վրայ լաւ տպաւորութիւն մ'ընելու: Կըսուի թէ Ռոգալէրի Գաղղիոյ հարաւային կողմը՝ զուցէ Նիցցա՝ պիտի ծամբորդէ առողջութիւնն ինամուկո նպատակաւ, քայց տարակուսական է թէ այս ատակ անձը զատկական պարապուրդէն վերջը կարենայ իւր արդիւնաւոր գործունէութիւնը վերստին սկսիլ:

Վերջին օրերս լուծուած էր սպանիական պաշտօնարանը: Բրիտանիէ կառավարող թագուհին սպառամիտ կուսակցութեան Սակառդա առաջնորդին յանձնեց պաշտօնարանին վերակազմութիւնը, որ եւ ընդունեցաւ, քայց յետոյ հրաժարիլ ստիպուեցաւ՝ ունեցած յառաջագրին գործադրութեան մասին իրեն համակրող կուսակցութեան երաշխաւորութիւն տալ չկարենալով: Թագուհին Մարտ 23ին Գանուկաս տէլ Գասդիլոյ պահպանողական կողմակցութեան առաջնորդին առաջարկեց նախարարապետութիւնը, զոր վերջինս ընդունեցաւ, եւ նոյն օրը պաշտօնարանը վերստին կազմեց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌՅԱՌՍԵՆՈՒՆ

ՊԵՏԵՐԿԱՆ — Մ. Թոխաթեցոյ Ողբ ի վերայ

Հայոց աշխարհին Ուսխաց. 97:

ՍԵՂԱՆԻՍԵՐԱՆԻՍ — Կաւկաս. 103:

ԳՐԱԿԱՆ — Մ. Խորենացի Ըստ Պրոֆ. Ն. Մառի.

108: — Եղիշէի պատմութեան աղբիւրը. 110: —

Նամակ առ խմբագրութիւն. 113: — Ծարութիւն

25. Շմաւոնեանի վրայ Նորագոյն տեղեկու-

թիւններ. 116:

ՆԿԱՐԱՅՐԱՆԻՍ — Դրանսիտանիոյ Հայոց մայրա-

քաղաքը (Պատկերով). 117:

ԳԵՂԱՐՈՒԹԵՆՍԵՐԱՆԻՍ — Հայկական երաժշտութեան

Նորագիտ դասագիրք մը (Պատկերով). 123:

ՍԵՆԵԿԱՆ

ՄԵՆԱՆԼՈՒԸ — Ժխախտի բերքը. 124: — Երկամ.

126:

ՏԵՏԵՐԱՆԻՍ — Կանկարասեաց հիւթը. 125: —

Ցաք ջուր էրբն առողջարար միջոց. 126: —

Հնայիկին խրատը ստամոքսի հարբեխն նկատ-

մամբ. 126:

ՆՈՐԱՆԻՍ — Ժափոնի Նախկին եւ Նորագոյն

քաղաքակրթութիւնը. 126: — Ի՛նչ վախում. 126:

ԳԵՂԱՆԵՐԱՆԻՍ ՏԵՌԱԿՈՒԹԻՒՆ 127:

ԿՐԱՏԱՐԱՆԻՍ ԵՒ ՊԵՏԱՆՈՒՆՍԻՍԻՍ ԽՄԱՐԱԳԻՐ

Է. ԱՌՓԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆՅ

Վ. ԵՆՆԱՆ. ՄԻԻԹԱՐԵՆՆ. ՑԱՐԱՆՆ